# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 58-Ա**
**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 28-ի հինգերորդ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 180-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը «Կապանի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի N 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոցի, թիվ 41/42 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությանը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 195-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Նորաշենիկ բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվության կարգով) Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան հրապարակ թիվ 2/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով Արշակ Անուշավանի Հարությունյանին և Արմինե Արմենի Համբարձումյանին օտարելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ըրկենանց գյուղի 1-ին փողոց թիվ 8/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով Լարիսա Շավարշի Բաղդասարյանին օտարելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի թիվ 5/25 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 2.21 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Նորաշենիկ գյուղում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

15. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Օխտար գյուղի Վերին թաղամաս թիվ 17 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Օխտար գյուղի Վերին թաղամաս թիվ 18 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Վաչագան թաղամասում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական սահմաններում (Արծվանիկ բնակավայր) գտնվող հողամասը «ՃՇՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին

19. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Ծղեր» այգեգործական ընկերության թաղամաս թիվ 32 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

20. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Ծղեր» այգեգործական ընկերության թաղամաս թիվ 33 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս աճուրդային կարգով օտարելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրից ծագած պարտավորությունները ներելու մասին

22. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը ժամանակավորապես այլ վայրում իրականացնելու վերաբերյալ

23. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին

24. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը որոշելու մասին

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*

*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 59-Ն**

**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն N 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ________

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ ________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. հունիսի 28*
*ք. Կապան*

*Հավելված 1*
*Կապան համայնքի ավագանու*
*« 28 » հունիս 2023թ. թիվ 59-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 1 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված ի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1100 + տող 1200+տող 1300) | | **100414,838** | **100414,838** | **0,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 1200 | **2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | | 1255,578 | 1255,578 | |
| | (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) | | | | |
| | այդ թվում՝ | | | | |
| 1250 | **2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից** | | 1255,578 | 1255,578 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 1257 | գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 1255,578 | 1255,578 | |
| 1300 | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | 99159,26 | 99159,26 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 1390 | **3.9 Այլ եկամուտներ** | | 99159,26 | 99159,26 | |
| 1393բ | Այլ ոչ հարկային եկամուտ | | 99159,26 | 99159,26 | |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* *Համիկ Ղոնյան*

*Հավելված 2*
*Կապան համայնքի ավագանու*
*« 28 » հունիս 2023թ. թիվ 59-Ն որոշման*

Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 2 հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բա- ժին | Խում բ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2400+տող2500+տող2600+տող2800+տող 2900+տող3000+տող3100) | 100414,838 | 100414,838 | |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2450+տող2490) | 99159,26 | 99159,26 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2420 | 04 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝ | 99159,26 | 99159,26 | |
| | | | | որից՝ | | | |
| 2421 | 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 99159,26 | 99159,26 | |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2950+տող2980) | 1255,578 | 1255,578 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և փարրական ընդհանուր կրթություն* | 1255,578 | 1255,578 | |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 1255,578 | 1255,578 | |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* *Հասմիկ Ղոնյան*

*Հավելված 3*
*Կապան համայնքի ավագանու*
*«28» հունիս 2023թ. թիվ 59-Ն որոշման*

**Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 3 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամ)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող4050+տող5000+տող 6000) | | 100414,838 | 100414,838 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝** (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700) | x | 100414,838 | 100414,838 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4500 | **1.5. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** (տող4510+տող4520+տող4530+տող4540) | | 1255,578 | 1255,578 | |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ | x | 1255,578 | 1255,578 | |
| | որից՝ | | | | |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 1255,578 | 1255,578 | |
| 4600 | ***1.6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ*** *(տող4610+տող4630+տող4640)* | x | 99159,26 | 99159,26 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4630 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)* *( տող4631+տող4632+տող4633+տող4634)* | x | 99159,26 | 99159,26 | |
| | որից՝ | | | | |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 99159,26 | 99159,26 | |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* Համիկ Ղոնյան

Հավելված 4
Կապան համայնքի ավագանու
«28» հունիս 2023թ. թիվ 59-Ն որոշման

## Կապան համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ն որոշման թիվ 6 հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2400+տող2500 տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 100414,838 | 100414,838 | |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2450+տող2490) | 99159,26 | 99159,26 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2400 | 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2450+տող2490) | 99159,26 | 99159,26 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2420 | 04 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝ | 99159,26 | 99159,26 | |
| 2421 | 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 99159,26 | 99159,26 | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 99159,26 | 99159,26 | |
| | | | | Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 99159,26 | 99159,26 | |
| | | | | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ | 99159,26 | 99159,26 | |
| | | | | այդ թվում | | | |
| | | | | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) | 99159,26 | 99159,26 | |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Այլ նպաստներ բյուջեից | 99159,26 | 99159,26 | |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2950) | 1255,578 | 1255,578 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և փարրական ընդհանուր կրթություն* | 1255,578 | 1255,578 | |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 1255,578 | 1255,578 | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 1255,578 | 1255,578 | |
| | | | | Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 1255,578 | 1255,578 | |
| | | | | 1.5. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 1255,578 | 1255,578 | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ | 1255,578 | 1255,578 | |
| | | | | որից՝ | | | |
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 1255,578 | 1255,578 | |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* *Համիկ Ղոնյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 60-Ն
28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 180-Ն որոշման Հավելված N 4-ի 1-ին կետի 1) ենթակետը լրացնել «է.» պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ. «է. հեծանիվ – 30 րոպեն – 500 դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ________
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ________
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ________
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ ________
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ________
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. հունիսի 28*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 61-Ա**
**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով սեփականության իրավունքով նվիրատվությամբ, համայնքի բյուջեով և սուբվենցիոն ծրագրով ձեռք բերված ակտիվները՝ այսուհետ որպես գույք, Կապան համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում ներառելու հանգամանքը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել՝ Կապան համայնքի ղեկավարի կողմից Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 184-Ա որոշման թիվ 1 հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

**ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ** ____________

**ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** ____________

**ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ** ____________

**ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ** ____________

**ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ____________

**ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ____________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. հունիսի 28*
*ք. Կապան*

Հավելված
Կապան համայնքի ավագանու
28 հունիսի 2023թ. N 61-Ա որոշման

Կապան համայնքի ավագանու 2022 թ դեկտեմբերի 27-ի թիվ 184- Ա որոշման
թիվ 1 հավելվածում կատարված լրացումներ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի արժեքը ՀՀ դրամ | Ընդամենը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակային սեղան | հատ | 8 | 55,000.00 | 440,000.00 |
| 2 | Կցասեղան | հատ | 2 | 20,000.00 | 40,000.00 |
| 3 | Սեղան՝ տպիչ սարքի | հատ | 1 | 40,000.00 | 40,000.00 |
| 4 | Գրապահարան | հատ | 7 | 55,000.00 | 385,000.00 |
| 5 | Կախիչ՝ 1 տեղանոց | հատ | 1 | 19,000.00 | 19,000.00 |
| 6 | Կախիչ՝ 2 տեղանոց | հատ | 2 | 20,000.00 | 40,000.00 |
| 7 | Քիվ/կառնիզ/ | մ | 5 | 7,000.00 | 35,000.00 |
| 8 | Գրասեղան | հատ | 18 | 55,000.00 | 990,000.00 |
| 9 | Գրապահարան-1 | հատ | 6 | 105,000.00 | 630,000.00 |
| 10 | Գրապահարան-2 | հատ | 5 | 73,500.00 | 367,500.00 |
| 11 | Սկավառակ - BDM-U 3X2P (Disc harrow- BDM-U 3X2P) | հատ | 1 | 4,900,000.00 | 4,900,000.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Խոտի մամլիչ - Մոդել AT388I (Press baler - Model AT388I) | հատ | 1 | 4,500,000.00 | 4,500,000.00 |
| 13 | Շիկահող բնակավայրի ակումբի շենքի վերակառուցում | հատ | 1 | 6,982,119.00 | 6,982,119.00 |
| 14 | Ծավ բնակավայրի վարչական շենքի վերակառուցում | հատ | 1 | 27,919,630.00 | 27,919,630.00 |
| 15 | Դավիթ Բեկ բնակավայրի մշակույթի տան վերակառուցում | հատ | 1 | 34,246,998.00 | 34,246,998.00 |
| 15 | Թումանյան փողոցի թիվ 9-ը շենքի հարևանությամբ հանգստի գոտու կառուցում | հատ | 1 | 6,952,220.00 | 6,952,220.00 |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ** | | | | | **88,487,467.00** |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* *Համիկ Ղոնյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 62-Ա

28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ «ԿԱՊԱՆԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց սեփականության իրավունքով հանձնել «Կապանի Ա.Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն Հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
28 հունիս 2023թ. N 62-Ա որոշման

| Գույք | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի գինը | Արժեքը |
| Գրասեղան | հատ | 18 | 55000 | 990000 |
| Գրապահարան - 1 | հատ | 6 | 105000 | 630000 |
| Գրապահարան - 2 | հատ | 5 | 73500 | 367500 |

*Աշխատակազմի քարտուղարի*
*պարտականությունները կատարող* *Հասմիկ Ղոնյան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա
**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 15 շենքի թիվ 4 բնակարանը անհատույց (նվիրատվության կարգով) օտարելու մասին» N 37-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետում «Հովհաննես Հենրիկի Քոչարյանին /ծնվ. 23.04.1982թ., անձն. AR 0437592, տրված 25.08.2017թ. 041-ից/» բառերը փոխարինել «Հովհաննես Հենրիկի Քոչարյանին /ծնվ. 23.04.1982թ., անձն. AV0549353, տրված 07.12.2022թ. 041-ից/» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

**ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ** ______________

**ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** ______________

**ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ** ______________

**ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ** ______________

**ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ______________

**ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ______________

**ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ______________

**ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ______________

**ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ______________

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ** ______________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒԻՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 64-Ա**
**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ Ք. ԿԱՊԱՆ, Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ԹԻՎ 41/42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության 31.05.2023թ. գրությունը և Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի թիվ 41/42 հասցեում գտնվող հասարակական նշանակության 76.45 քառ.մետր տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05032020–09–0012) 5 (հինգ) տարի ժամկետով, ամսական 39240 ՀՀ դրամ վարձավճարով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրաետության Էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերությանը՝ իր կանոնադրությամբ նախատեսված գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

**ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ** ____________

**ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** ____________

**ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ** ____________

**ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ** ____________

**ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** ____________

ԱՐԾԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 65-Ա
28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման 2023 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 195-Ա որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 10-ից-17-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ____________
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________
ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________
ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ ____________
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________
ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________
ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ________________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ________________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ________________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ________________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ________________

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ ________________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. հունիսի 28*
*ք. Կապան*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու
2023թ. հունիսի 28-ի N65-Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ

*ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման*

| հ/հ | Օտարվող գույքի հասցեն | Օտարվող գույքի մակերեսը, քմ | Օտարման նպատակը | Օտարման ժամկետները | Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան |
|---|---|---|---|---|---|
| 10 | ք.Կապան «Օղեր» այգեգործական ընկերության թաղամաս, թիվ 32 | 919.5 | բնակելի տան կառուցում | II կիսամյակ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 11 | ք.Կապան, «Օղեր» այգեգործական ընկերության թաղամաս, թիվ 77 | 945.4 | բնակելի տան կառուցում | II կիսամյակ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 12 | ք.Կապան, Մ.Հարությունյան 5/25 | 36 | գեղեցկության սրահի կառուցում | II կիսամյակ | բնակավայրերի հասարակական կառուցապատման |
| 13 | ք.Կապան, Վաչագան թաղամաս | 2.46504 | գյուղատնտեսական գործունեության ծավալում | II կիսամյակ | գյուղատնտեսական նշանակության վարելահող |
| 14 | ք.Կապան, Շահումյան հրապարակ 2/2 | 1.2 | հողամասի ընդլայնման | II կիսամյակ | բնակավայրերի հասարակական կառուցապատման |
| 15 | Կապան համայնք, գյուղ Օխտար, Վերին թաղամաս թիվ 18 | 1470.2 | բնակելի տան կառուցում | II կիսամյակ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 16 | Կապան համայնք, գյուղ Օխտար, Վերին թաղամաս թիվ 17 | 1902.2 | բնակելի տան կառուցում | II կիսամյակ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 17 | Կապան համայնք, գյուղ Ըրկենանց, 1-ին փողոց թիվ 8/1 | 1403 | ավել օգտագործվող հողամաս | II կիսամյակ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |

*Աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող* Հ. Ղոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 66-Ա
28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման և հաշվի առնելով Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 15-ի N2/փ-121 դրական եզրակացությունն ու Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող Նորաշենիկ բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,27161 հա այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-067-0275-0005-ից) փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա:
2. Սույն որոշման 1-ին կետով հատուկ նշանակության հողերի կատեգորիա փոխադրված հողամասը, պաշտպանական նպատակներով օգտագործելու համար, անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվության կարգով) օտարել Հայաստանի Հանրապետությանը:
3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ____________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ____________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ____________

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ ____________________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________________

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ ____________________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 67-Ա

28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՇԱԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ԱՐՄԵՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան հրապարակի թիվ 2/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության «հասարակական կառուցապատման» գործառնական նշանակության 0.00012 հա հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 09-001-0566-0171)՝ հողամասի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արշակ Անուշավանի Հարությունյանին և Արմինե Արմենի Համբարձումյանին 3470 (երեք հազար չորս հարյուր յոթանասուն) դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 17 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 68-Ա

**28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՐԿԵՆԱՆՑ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԼԱՐԻՍԱ ՇԱՎԱՐՇԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ըրկենանց գյուղի 1-ին փողոցի թիվ 8/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության «բնակելի կառուցապատման» գործառնական նշանակության 0.1403 հա հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 09-079-0002-0029)՝ որպես ավել օգտագործվող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարել Լարիսա Շավարշի Բաղդասարյանին 129640 (մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր քառասուն) դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 18 )՝**

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ ________

ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ________

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ ________

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ ________

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ________

ԱԼԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ____________

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ____________

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ____________

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ ____________

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ____________

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ԷՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ____________

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ ____________

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2023թ. <u>հունիսի 28</u>*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 69-Ա
28 ՀՈՒՆԻՍԻ 2023թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5/25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 80-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի N 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումների և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Մ.Հարությունյան փողոցի թիվ 5/25 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.0036 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-001-0565-0135) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ գեղեցկության սրահ կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի օտարման պայմանագրում ամրագրել Կապան համայնքի՝ նշված հողամասի առաջնային հետգնման իրավունք և ծրագրի իրականացման ժամկետ սահմանել 10 /տասը/ տարի:
